Հաստատում եմ՝
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր
տեխնիկական գիտությունների թեկնածու,
դոցենտ, Խ. Ղազարյան

11/01/ 2024թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված **Միքայել Հենրիխի Ավանեսյանի «Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնը Մեծ Մերձավոր Արևելքում. փոխակերպումները և նոր մարտահրավերները»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

<u>Հաստատվել է</u>

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի 2024 թ. հունվարի 11-ի նիստում (արձանագրություն N 1): Ամբիոնի նիստին մասնակցում էին հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Լ. Հ. Պետրոսյանը, ք.գ.դ., պրոֆեսոր Մ. Մարգարյանը, ք.գ.թ, դոցենտ Մ. Գ. Մարգարյանը, ք.գ.թ. Մ. Արսենյանը, պրոֆեսոր հ.գ.դ., Ա. Բ. Լոքյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Ռ. Վ. Աղուզումցյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Հ. Պողոսյանը, դոցենտ Ա. Այվազյանը, ամբիոնի դասախոսներ Ա. Ղուշչյանը, Լ. Գրիգորյանը, ամբիոնի գործավար Ս. Յ. Ավագյանը:

Միքայել Հենրիխի Ավանեսյանի «Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնը Մեծ Մերձավոր Արևելքում. փոխակերպումները և նոր մարտահրավերները» ատենախոսության թեման խիստ արդիական է, քանի որ դրանում դիտարկվում են Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանի էներգատրանսպորտային անվտանգության խնդիրները,

բացահայտվում են Թուրքիայի աշխարհառազմավարական նախաձեռնությունները: Գնահատելի է, որ հեղինակը Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության ասպեկտները դիտարկում է տարածաշրջանային մարտահրավերների համատեքստում, քննարկում է ներքին էներգետիկ և տրանսպորտային անվտանգության հետ կապված խնդիրների լայն շրջանակ: Ատենախոսության մեջ առանցքային տեղ է զբաղեցնում էներգատրանսպորտային գործոնի դերը Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսի ձևավորման գործում, զուգահեռ քննարկվում են էներգետիկ անվտանգության ապահովման ներքին ու արտաքին ռիսկերն ու մարտահրավերները: Ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ Թուրքիայի կառավարությունն ավանդաբար պահպանում է բոլոր քաղաքական գործընթացների ռազմավարական իմաստավորման մակարդակը, ուսումնասիրվել են իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից ընդունված տարբեր պաշտոնական փաստաթղթերը և դրանց գործնական կիրառումը:

Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանը հարուստ է ոչ միայն էներգետիկ ռեսուրսներով, այլև տրանսպորտային և լոգիստիկ հաղորդակցությունների հնարավորություններով, որոնք առաջնային նշանակություն ունեն անդրազգային ընկերությունների և առանձին երկրների համար: Ներքին և արտաքին շուկաներում քվազիլիբերալիզմի առկա կուրսի պայմաններում Թուրքիան մշտապես ձգտում է վերացնել արտաքին ուժերի ազդեցությունը, ինչն առաջին հերթին արտացոլվում է վերականգնվող էներգետիկայի համակարգերի խթանման գործընթացներում: Նմանատիպ մոտեցում է նկատվում նավթի և գազի արդյունաբերության հարցերի նկատմամբ: Ատենախոսը արդարացիորեն քննարկման առարկա է դարձնում Սև և Միջերկրական ծովերում թուրքական էներգետիկ հանքավայրերի մշակման հարցը: Այնուամենայնիվ, Թուրքիան նավթագազային աղբյուրների խոշորագույն ներկրողներից մեկն է, իսկ միջուկային էներգետիկան դեռ կայացման փուլում է: Լոգիստիկ առանձնահատկությունները բավականին կարևոր են և կիրառելի Թուրքիայի աշխարհառազմավարության գործնական ընկալման համատեքստում: Քանի որ Թուրքիայում նկատվում է արդյունաբերական սեկտորի ակտիվ զարգացում, ստեղծվում է տրանսպորտային ենթակառուցվածքների տարատեսակացման հեռանկար: Հաշվի առնելով Թուրքիայի համար «Միջին միջանցքի» կարևորությունը՝ ատենախոսության մեջ ուսումնասիրվում են տրանսպորտային և լոգիստիկ այլ նախագծերի արդիական հարցերը, ինչպիսիք են «Մեկ գոտի, մեկ ճանապարհ»-ը, «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը և «TRACECA» – ն: Նշված նախագծերի համակարգային վերլուծությունը բավականին կարևոր է նաև Հայաստանի աշխարհաքաղաքական հեռանկարների ուսումնասիրության տեսանկյունից:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ վերլուծվում են Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության կիրառական ասպեկտները՝ ելնելով «հաբային» («հանգուցային») հեռանկարներից:

Ատենախոսության նպատակն է՝ համապարփակ կերպով վերլուծել Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության հեռանկարները քաղաքական գործընթացների վերափոխման և փոխակերպման պայմաններում: Այս համատեքստում հեղինակին ամբողջությամբ հաջողվել է վերլուծել էներգատրանսպորտային գործոնի կարևորությունը Թուրքիայի աշխարհառազմավարության հարցում: Գովելի է, որ հեղինակը կարողացել է ներքին էներգետիկ անվտանգության արդի մարտահրավերները համադրել արտաքին քաղաքական միտումների հետ: Իսկապես, հենց էներգետիկ անվտանգության ներքին մարտահրավերներով են հաճախ պայմանավորված արտաքին քաղաքականության ռազմավարական նախաձեռնությունները: Դիտարկվել են վերականգնվող և միջուկային էներգետիկայի արդիական հարցերը: Ատենախոսության կարևոր ասպեկտներից է Թուրքիայում լիբերալ և նեոլիբերալ էներգատրանսպորտային կուրսերի բացահայտումը: Հեղինակը կարողացել է քննադատաբար վերլուծել այդ ասպեկտները, ցույց տալ ներքին շուկայում քաղաքական վերահսկողության առանձնահատկությունները և պետական քաղաքականության վեկտորի հիմնական ուղղությունների բացառապես ռազմավարական նշանակություն ունեցող նախագծերի շուրջ կենտրոնացած լինելը: Գովելի է, որ հեղինակը կիրառում է ռիսկերի և հեռանկարների գնահատման էմպիրիկ մեթոդներ՝ Թուրքիայի աշխարհառազմավարական հիմքերի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար: Մասնավորապես, վիճակագրական և պատմական մեթոդների կիրառումը թույլ են տվել բացահայտել Թուրքիայի էներգատրանսպորտային համակարգի ակտուալ խնդիրները: Իսկ կառուցվածքային և ֆունկցիոնալ մեթոդների միջոցով հեղինակը գնահատել է «Արդարություն և զարգացում» կուսակցության ռազմավարական միջոցառումները, ինչպես նաև Թուրքիայի համար առաջնային քաղաքական շահերի և առաջնահերթությունների ձևավորման գործընթացները:

Հարկ է նշել, որ ատենախոսության առանցքային դրույթները կիրառելի են, ունեն գիտագործնական նշանակություն և՛ գիտական հետազոտությունների իրականացնելու, և՛ ՀՀ էներգատրանսպորտային ռազմավարության պլանավորման գործում: Ատենախոսության գործնական արժեքը կայանում է նաև նրանում, որ հեղինակը ընդգծել է էներգատրանսպորտային ենթատեքստի կարևորությունը աշխարհաքաղաքական վեկտորի ձևավորման գործում:

Այսպիսով, հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել Հայաստանի էներգետիկ և ազգային անվտանգության ռազմավարությունների

մշակման և կատարելագործման գործում (որոնք, ըստ հեղինակի, թարմացման շատ լուրջ կարիքն ունեն), ինչպես նաև նպաստել սույն ոլորտներում ներգրավված կառույցների (պետական և հասարակական) գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Աշխատանքը պարունակում է առաջադրված խնդիրների համապարփակ լուծում, համակարգված է և շարադրված է գիտական պատշաճ մակարդակով:

Ատենախոսն օգտագործել է անհրաժեշտ գիտական և աղբյուրագիտական հենք՝ Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային զարգացման հիմնախնդիրներին առնչվող մի շարք մենագրություններ և գիտական հոդվածներ (մի շարք լեզուներով), գիտավերլուծական նյութեր, միջազգային էներգետիկական իրավական և վիճակագրական փաստաթղթեր, Թուրքայի նախագահի կարգադրությունները և հրամանները: Օգտագործված գրականության ցանկը ընտրված է ճիշտ, ատենախոսությունում օգտագործվող գիտական հետազոտությունների և հոդվածների մեծ մասը ինդեքսավորվում է Scopus և WoS տվյալների բազաներում, որոնց օգտագործումը անվիճելիորեն գնահատելի է:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից (տասներկու ենթագլուխներից), եզրակացությունից, գրականության ցանկից:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և օգտակար Թուրքիայի աշխարհառազմավարության իմաստավորման տեսանկյունից: Հատկանշական է, որ եզրակացության մեջ հեղինակը ներկայացնում է տարբեր եզրակացություններ և առաջարկություններ, որոնք արժեքավոր են և՛ Հայաստանի, և՛, ընդհանուր առմամբ, Մեծ Մերձավոր Արևելքում Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնի ընկալման համար:

Ատենախոսության նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնը հետազոտվել է քաղաքագիտական դաշտում՝ միջգիտակարգային մոտեցման կիրառման կարևորմամբ:

Այս հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակի հրապարակային պաշտպանության դրված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Այնուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում ատենախոսության հեղինակ Միքայել Ավանեսյանի հետ երկխոսություն ունենալ: Այդ նպատակով կխնդրեինք, որ հեղինակը իր հետագա ուսումնասիրություններում նկատի ունենա և պատասխանի մեր կողմից առաջարկվող հետևյալ դիտողություններին.

1. Ատենախոսության առաջին գլխում հեղինակը մակերեսորեն է վերլուծում նեոլիբերալիզմի և լիբերալիզմի արդի գաղափարական

առանձնահատկությունները՝ սահմանափակվելով նշված հարացույցերի բացառապես էներգետիկ և տնտեսական հարցերի շրջանակներում դիտարկմամբ: Կարծում ենք, որ աշխատանքը ավելի կշահեր, եթե դրանք դիտարկվեին նաև որպես Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության քաղաքական գաղափարախոսության արդի **խաղային** վերափոխման համատեքստում: Համոզված ենք, որ Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության առաջնորդը, արդի մարտահրավերներին համահունչ, հստակ, **քաղաքական արդիականացման խաղային տրամաբանության մեջ** կերպափոխել և կկերպափոխի թուրքական էտատիզմը:

2. Ենթագլուխ 3.4.-ում հեղինակը մասամբ է բացահայտում Թուրքիայի էներգատրանսպորտային աշխարհառազմավարության հայաստանյան վեկտորը՝ սահմանափակվելով մակրոռեգիոնալ քաղաքական գործընթացների վերլուծությամբ: Հաշվի առնելով այն, որ Թուրքիայի էներգատրանսպորտային ռազմավարությունը ուղիղ ազդեցություն ունի Հարավային Կովկասի ու, մասնավորապես, Հայաստանի անվտանգային միջավայրի վրա՝ այդ վեկտորի ավելի խորքային ուսումնասիրումը էապես կբարձրացներ ատենախոսության կիրառական նշանակությունը:

3. Չնայած այն հանգամանքին, որ ատենախոսության մեջ առկա են Թուրքիայի էներգետիկ անվտանգության էկոլոգիական ասպեկտները շոշափող որոշ հարցեր, հեղինակը կարող էր ընդլայնել էկոլոգիական անվտանգության վերաբերյալ հետազոտական դաշտը: Հաշվի առնելով Թուրքիայում ածխաջրածնային (կամ նավթագազային) աղբյուրների սպառման բարձր մակարդակը՝ 62-րդ էջում նշում է բացառապես CO2 արտանետումների ցուցանիշը: Կարծում ենք, որ էկոլոգիական անվտանգության և կլիմայի փոփոխության խնդիրների համակարգային ներկայացումն ու վերլուծությունը կարևոր է Թուրքիայի նման արդյունաբերական զարգացող տնտեսություն ունեցող երկրում, քանզի վերջին երկու տասնամյակներում իրականացվում են ակտիվ միջոցառումներ, որոնք նպաստում են էներգետիկայում էկոլոգիապես մաքուր մեթոդներին անցնելուն, մասնավորապես՝ վերականգնվող աղբյուրներին:

4. Անխոս ատենախոսին հաջողվել է համակարգված ուսումնասիրել իր առջև դրված խնդիրները և ներկայացնել Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնը Մեծ Մերձավոր Արևելքում. փոխակերպումները և նոր մարտահրավերները: Սակայն, կարծում ենք որ կարելի էր կարևորել այն խնդիրները, որոնք առկա են Թուրքիայում՝ պայմանավորված՝ էներգատրանսպորտային գործոնով առաջացած տարածքային անհամաչափ զարգացմանը: Միջազգային զեկույցներում նշվում է, որ Թուրքիան ունի «աճի բևեռների» և «սև խոռոչների» խնդիր: Ավելին, Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության առաջնորդի կողմից ստեղծված և ներկայացվող

Թուրքիայի կերպարը, իր կայսերապաշտական բնույթի և էության մեջ բավականին խոցելի է: Այդ գիտակցմամբ էլ Թուրքիան աջակցում է ՆԱՏՕ-ին Ֆինլանդիայի և Շվեդիայի անդամակցությանը ընդդեմ ՌԴ-ի:

Այնուամենայնիվ, նշված թերությունները չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը: Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ **Միքայել Հենրիխի Ավանեսյանի՝ «Թուրքիայի աշխարհառազմավարության էներգատրանսպորտային գործոնը Մեծ Մերձավոր Արևելքում. փոխակերպումները և նոր մարտահրավերները»** թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի 2024 թ. հունվարի 11 N1 նիստում:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հ.գ.թ, դոցենտ_____ Լ. Պետրոսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Ավագյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ _____ Ս. Պողոսյան